

Ի՞նչ է ՄՈՏ-ն

ՄՈՏ-ն օգտագործում է հզոր մագնիսական դաշտ և ռադիոալիքներ՝ մարմնի ներքին կառուցվածքների մանրամասն պատկերներ ստանալու համար: Այն ոչ իոնիզացնող (ոչ ճառագայթային և անվտանգ հետազոտություն է:



Ե՞րբ է կիրառվում

ՄՈՏ-ն շատ ինֆորմատիվ է փափուկ հյուսվածքների և մի շարք օրգան համակարգերի (գլխուղեղի, ողնուղեղի, հոդերի, փափուկ հյուսվածքների) մանրամասն պատկերավորման համար:

Հիմնականում կիրառվում է գլխուղեղի և ողնուղեղի մի շարք ախտահարումների, հոդամկանային հիվանդությունների կամ վնասվածքների ախտորոշման դեպքում: Կախված խնդրից՝ ՄՈՏ հետազոտությունը ևս կարող է իրականացվել կոնտրաստային նյութով:

Ինչպե՞ս է իրականացվում հետազոտությունը

Երեխան պառկում է հատուկ սեղանի վրա, որն առաջ և հետ շարժվելով, անցնում է սարքի միջով մինչև համապատասխան պատկերների ստացումը: Հետազոտությունն անցավ է, սակայն կարող է լինել աղմկոտ: Աղմուկը նվազեցնելու և լարվածությունն իջեցնելու համար այժմ կիրառվում են հատուկ ականջակալներ: ՄՈՏ հետազոտությունն ավելի երկարատև է և երեխան պետք է անշարժ պառկի հետազոտության ընթացքում: Այն դեպքում, երբ հնարավոր չէ ապահովել երեխայի անշարժ դիրքը հետազոտության ընթացքում, հետազոտությունն իրականացվում է ընդհանուր անզգայացման պայմաններում՝ անեսթեզիոլոգների հսկողության տակ:

- Հետազոտությանը պետք է ներկայանալ առանց մետաղական ամրակների հագուստով, չկրել զարդեր:
- Արգելվում է հետազոտության սենյակ մտնել մետաղական իրեր կամ կոնստրուկցիաներ ունենալու դեպքում:
- Բրեկետների, ստենտների, մետաղական իմպլանտների առկայության դեպքում անհրաժեշտ է նախապես տեղեկացնել անձնակազմին և ներկայացնել վերջիններիս տեխնիկական բնութագիրը, որպեսզի գնահատվի դրանց համատեղելիությունը սարքի հետ:

Երեխայի լարվածությունը նվազեցնելու համար ուղեկցող(ներ)ը կարող են գտնվել հետազոտության սենյակում՝ պահպանելով անվտանգության նորմերը:




«Ուլիզմոր կանանց և երեխաների հիվանդանոց»
 Հ. Ներսիսյան 10/7, Երևան 0014, Հայաստան
 +374 12345678

«Ուլիզմոր ընտանիքի առողջության կենտրոն»
 Պուշկին 56, Երևան 0002, Հայաստան
 +374 12345677

www.wigmore.am

**Ուլիզմորի Կանանց
Հետազոտություններ**

**ՀՈՒՇԱԹԵՐԹԻԿ
ՇՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ**



ԻՆՆ Ե ուլտրաձայնային հետազոտությունը (ՌԻԶՀ)

Ուլտրաձայնային հետազոտությունը (սոնոգրաֆիան), ոչ իոնիզացնող (ոչ ճառագայթային), անվտանգ հետազոտության մեթոդ է, որը օգտագործում է ուլտրաձայնային ալիքներ՝ ներքին օրգանների և տարբեր կառուցվածքների պատկերավորման նպատակով:




Ե՞րբ է այն կիրառվում

Ուլտրաձայնային հետազոտությունը ամենակիրառելի հետազոտության մեթոդն է, որը լայն կիրառում ունի տարբեր ներքին օրգաններ, հյուսվածքներ հետազոտելու համար (յարր, փայծաղ, երիկամներ, սիրտ, թոքեր, գլուխ, ավշային հանգուցներ, հոդեր), և հղիության ընթացքում՝ պտղի ներարգանդային զարգացումը գնահատելու համար:

ՌԻԶՀ հետազոտության տեսակ է նաև էխոսրտագրությունը, որը հնարավորություն է տալիս գնահատել սիրտանոթային համակարգի կառուցվածքային առանձնահատկությունները և ֆունկցիան, ախտորոշել մի շարք պաթոլոգիաներ (օրինակ՝ սրտի բնածին արատներ): Ոսկրային համակարգը ՌԻԶՀ-ով չի գնահատվում, վերջինիս ախտորոշման ոսկե ստանդարտը ռենտգենն է:

Ինչպե՞ս է իրականացվում հետազոտությունը


Երեխայի մաշկը պատվում է հատուկ գելով, ապա փոխարկիչի սահող շարժումների միջոցով հետազոտվող հատվածը արտածվում է սարքի էկրանին: Գործընթացն անցավ է և անվտանգ, բուժառուև չի ճառագայթվում:



- Հետազոտությանը ցանկալի է ներկայանալ հարմար հագուստով, որպեսզի հեշտ լինի մերկացնել հետազոտվող հատվածը:
- Աղետամոքսային համակարգի մանրամասն գնահատման նպատակով անհրաժեշտ է հետազոտությանը ներկայանալ քաղցած, չուտել հետազոտությունից առաջ մինչև 6 ժամ (կրծքահասակ երեխաների դեպքում մինչև 2-3 ժամ):
- Միզային համակարգի և կոնքի օրգանների հետազոտման համար անհրաժեշտ է հետազոտությունից առաջ շատ ջուր խմել՝ միզապարկի բավարար լցվածությունն ապահովելու նպատակով:

ԻՆՆ Ե ռենտգեն հետազոտությունը

Ռենտգեն իոնիզացնող (ճառագայթային) հետազոտության մեթոդ է, որը, օգտագործելով ցածր դոզավորման ռենտգենյան ճառագայթներ, ստեղծում է մարմնի ներքին կառուցվածքների երկչափ (2D) պատկերներ:



Ե՞րբ է կիրառվում

Ռենտգեն հետազոտությունը հիմնականում կիրառվում է ոսկրային համակարգի վնասվածքների և հիվանդությունների, շնչուղիների բորբոքումների, միզային և մարսողական համակարգի որոշ հիվանդությունների ախտորոշման նպատակով:

Այն կարող է իրականացվել նաև կոնտրաստային նյութի կիրառումով. օրինակ՝ միզային համակարգի (էքսկրետոր ուրոգրաֆիա, ցիստոգրաֆիա), մարսողական համակարգի գնահատման նպատակով (բարիոմի սուլֆատով ստամոքսաղիքային համակարգի հետազոտում, իրիգոգրաֆիա): Ինչպես բոլոր ճառագայթային մեթոդները, ռենտգեն հետազոտությունը կատարվում է միայն ուղեգրող բժշկի ցուցումով:

Ինչպե՞ս է իրականացվում հետազոտությունը

Երեխայից պահանջվում է հետևել անհրաժեշտ իրահանգներին. կարճ ժամանակ անշարժ մնալ համապատասխան դիրքում, մինչև ռենտգեն ախտորոշման սարքով ֆիքսվեն նկարները: Գործընթացը տևում է րոպեներ և բացարձակապես անցավ է:

- Հետազոտվող հատվածը պետք է լինի առանց հագուստի, զարդերի կամ մետաղական ամրակների, ուստի պլանային հետազոտության խորհուրդ է տրվում ներկայանալ հարմար հագուստով, որը հեշտ կլինի հանել:
- Հետազոտվող հատվածից դուրս մնացող մարմնի մասերը ծածկվում են պաշտպանիչ գոգնոցով:


ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՏՈՍՈՐԱԾԻԱ (ՀՏ)

ԻՆՆ Ե Համակարգչային տոմոգրաֆիան

ՀՏ-ն իոնիզացնող (ճառագայթային) հետազոտության մեթոդ է, որը նույնպես օգտագործում է ռենտգենյան ճառագայթները. դրանք ուղղվում են տարբեր անկյուններից և համակարգչի էկրանին արտացոլվում եռաչափ (3D) բազմաշերտ պատկերների ձևով: Ի տարբերություն ռենտգեն հետազոտության, այստեղ միևնույն հատվածը արտացոլվում է բազմաթիվ նկարների տեսքով:

ՀՏ-ն հնարավորություն է տալիս բժշկին տարբեր առանցքներով և առավել մանրամասն գնահատել հետազոտվող հատվածը:

Համակարգչային հետազոտության ճառագայթումը զգալի գերազանցում է ռենտգեն հետազոտության ճառագայթումը, ուստի այն ևս կատարվում է միայն ուղեգրող բժշկի ցուցումով:



Ե՞րբ է կիրառվում

ՀՏ սկանավորումը ապահովում է ոսկրային համակարգի, ներքին օրգանների և փափուկ հյուսվածքների մանրամասն պատկերների ստեղծում: ՀՏ կարող է իրականացվել կոնտրաստային նյութի կիրառումով և առանց դրա՝ կախված խնդրից և հիվանդության պատմությունից: Կոնտրաստային նյութը կիրառվում է միայն երիկամների ֆունկցիայի գնահատումից հետո (արյան մեջ կրեատինինի նորմալ մակարդակի) և հնարավոր հակացուցումների (օրինակ, ալերգիա յոդի նկատմամբ) բացակայության դեպքում:

Ինչպե՞ս է իրականացվում հետազոտությունը

Երեխան պառկում է հատուկ սեղանի վրա, որն առաջ և հետ շարժումներով անցնում է սարքի միջով և ստանում համապատասխան պատկերներ: Հետազոտությունը անցավ է, կարճատև: Երեխայից պահանջվում է հետազոտության ընթացքում անշարժ մնալ և հետևել շնչառական պարզ իրահանգներին: Որոշ դեպքերում, երբ հնարավոր չէ ապահովել երեխայի անշարժ դիրքը հետազոտության ընթացքում, սկանավորումը իրականացվում է կարճատև, ընդհանուր անզգայացման պայմաններում անեսթեզիոլոգների հսկողության տակ:

- ՀՏ հետազոտությանը պետք է ներկայանալ առանց մետաղական ամրակների կամ զարդերի:
- Կոնտրաստ նյութի կիրառման դեպքում անհրաժեշտ է ներկայանալ քաղցած, հետազոտությունից մինչև 2 ժամ առաջ ոչինչ չուտել:

